կատարվելն պատշաճ՝ պարտավորության պայմաններին, օրենքին և այլ իրավական ակտերի պահանջներին համապատասխան, իսկ նման պայմանների ու պահանջների բացակայության դեպքում՝ գործարար շրջանառության սովորույթներին կամ սովորաբար ներկայացվող այլ պահանջներին համապատասխան:

Ամփոփելով վերը նշվածը՝ Դատարանը գտնում է, որ Պայմանագիրը միակողմանի լուծվել է նույն Պայմանագրի 2.1.3 կետի «ա» ենթակետով՝ մատուցված ծառայության N 1 Հավելվածով սահմանված պահանջներին չհամապատասխանելու հիմքով, Պայմանագրի լուծումն իրավաչափ է, քանի որ հայցվորը կատարել է Պայմանագրով 2.1.3 կետի «ա» ենթակետով նախատեսված էական խախտում, ուստի հայցն անհիմն է և ենթակա է մերժման:

Անդրադառնալով դատական ծախսերի փոխհատուցմանը և գործին մասնակցող անձանց միջև դրանց բաշխմանը՝ Դատարանը գալիս է հետևյալ եզրահանգմանը.

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 101-րդ հոդվածի համաձայն՝ դատական ծախսերը կազմված են պետական տուրքից և գործի բննության հետ կապված այլ ծախսերից:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 109-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դատական ծախսերը գործին մասնակցող անձանց միջև բաշխվում են բավարարված հայցապահանջների չափին համամասնորեն:

Վերոգրյալի հիման վրա և նկատի ունենալով, որ հայցը ենթակա է մերժման՝ Դատարանը գտնում է, որ պետական տուրքի հարցը պետք է համարել լուծված:

Անդրադառնալով կիրառված հայցի ապահովման միջոցի պահպանման հարցին՝ Դատարանը գալիս է հետևյալ եզրահանգմանը.

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 134-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ Դատարանը գործին մասնակցող անձի միջնորդությամբ կամ սույն օրենսգրքով նախատեսված դեպքերում իր նախաձեռնությամբ կարող է վերացնել հայցի ապահովման միջոցը:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 136-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ հայցը մերժելու մասին վճիռ կայացվելու դեպքում հայցի ապահովման միջոցները պահպանվում են մինչև վճռի օրինական ուժի մեջ մտնելը:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 234.12.-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պատվիրատուի և գնահատող հանձնաժողովի գործողությունների (անգործության) և որոշումների բողոքարկման հետ կապված վեճերով դատարանի եզրափակիչ դատական ակտն ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

Նման պայմաններում նկատի ունենալով, որ դատարանի եզրափակիչ դատական ակտն ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, իսկ հայցը մերժելու մասին վճիռ կայացվելու դեպքում հայցի ապահովման միջոցները պահպանվում են մինչև վճռի օրինական ուժի մեջ մտնելը, Դատարանը գտնում է, որ անհրաժեշտ է վերացնել 17.11.2022թ. որոշմամբ կիրառված հայցի ապահովման միջոցը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 191-192-րդ հոդվածներով՝ Դատարանը՝

ՎՃՌԵՑ

«Պահապան 1» ՍՊԸ-ի հայցն ընդդեմ ՀՀ պետական եկամուտների կոմիտեի՝ ՀՀ պետական եկամուտների կոմիտեի և «Պահապան 1» ՍՊԸ-ի միջև 22.02.2022թ. կնքված «ՀՊԵԿ-ԲՄՄՀԲ-2021/3» ծանկագրով պայմանագրի միակողմանի լուծումն անվավեր ճանաչելու պահանջի մասին, մերժել:

Պետական տուրքի հարցը համարել լուծված:

Վերացնել ՀՀ Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի 17.11.2022թ. որոշմամբ կիրառված հայցի ապահովման միջոցը:

Վճիռն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից և կարող է բողոքարկվել ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարան՝ հրապարակման պահից մեկամսյա ժամկետում:

ԴԱՏԱՎՈՐ Ս. ՍԱՀԱԿՅԱՆ